ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 (տասնհինգ) անդամներ:

Բացակա էին՝ —

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ ԴԻ ՀՀԿ Տարեկոծ Հ. Գրիգորյանը, ՏԻ և ՀՀԿ հարկերով վարչության պետ Հ. Հարությունյանը, գլխավոր մ. Դոլիանովայանը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:

Նիստը վարում էր նիստին ներկա ավագանու անդամներից տարիքով ավագ անդամ՝

Մարիամ Մեհրաբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Դանիելյանը

Լսեցին

2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ավագանին որոշում է՝

1.Հաստատել 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում համամասնական ընտրակարգով ընտրված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ավագանու 14-ը նոյեմբերի 2022 թվականի թիվ 11 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1.2.Հայաստանի Հանրապետության «Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ ընտրված համայնքի ղեկավարի տվյալների հրապարակման մասին,

1.3.Եղեգիս համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 18-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին,

1.4.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը և երդման տեքստը հաստատելու մասին,

1.5.Նորընտիր Եղեգիս համայնքի Ավագանու առաջին նստաշրջանի գումարման օր սահմանելու մասին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 142.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, ***ավագանին որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության «Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան Եթե համայնքի ավագանու ընտրության արդյունքով ընտրությանը մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքից) մեկն ստանում է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձն օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար:

Վերը նշված հոդվածի տրամաբանությանը համահունչ՝ Եղեգիս համայնքի ավագանու 25-ը սեպտեմբերի 2022 թվականի ընտրություններում առաջադրված «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցությունը ստացել է քվեարկության մասնակիցների 56,8 տոկոս կողմ քվեն, ուստի ընտրական ցուցակի առաջին համարի ավագանու թեկնածու Արթուր Կամոյի Ստեփանյանը օրենքի ուժով համարվում է Եղեգիս համայնքի ընտրված համայնքի ղեկավար:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 18-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2–րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, ***ավագանին որոշում է՝***

1.Ուժը կորցրած ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N 18 Ն որոշումը:

2.Ընդունել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԵՐԴՄԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 74-րդ հոդվածի պահանջներով

ավագանին որոշում է՝

1.Հաստատել նորընտիր Եղեգիս համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

2.Հաստատել Եղեգիս համայնքի ղեկավարի երդման արարողության տեքստը համաձայն սույն որոշման հավելված 2-ի:

Կողմ-15 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121Ա/

Լսեցին

ՆՈՐԸՆՏԻՐ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, ***ավագանին որոշում է՝***

Նորընտիր Եղեգիս համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օր սահմանել 2022 թվականի նոյեմբերի 30-ը, ժամը 11:00-ին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122Ա/

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Մանուկյան Սաթինե

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան

Ստեփանյան Նարինե

Սմբատյան Մամիկոն

Վարդանյան Վարդան

Հարությունյան Կարեն

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա

Բաբայան Վահե

Նիստն արձանագրեց՝ Աննա Գասպարյան